ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՏԻՐՈՂ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՀԱՐՑԱԳՆԴՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով մի խումբ դեպուտատների հարցապնդումը և դրան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ԱՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ, դեպուտատ Ա. Ի. Վոլսկու տված պատասխանը, ՍՍՀՄ Գերագույն սովետը **որոշում է.**

1. Ի գիտություն ընդունել դեպուտատ Ա. Ի. Վոլսկու հաղորդումը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և նրա շուրջն ստեղծված իրադրության մասին:

2. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը հանձնարարել կուսակցական, պետական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ անցկացնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից, Ադրբեջանական ՍՍՀ-ից և Հայկական ՍՍՀ-ից ընտրված ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատների խորհրդակցություն՝ քննարկելու համար հիշյալ ռեգիոնում իրադրության նորմալացման և ադրբեջանական ու հայ ազգությանը պատկանող քաղաքացիների ինտերնացիոնալ բարեկամության վերականգնման անհետաձգելի միջոցառումներ:

3. Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի Գերագույն սովետներին հանձնարարել իրենցից կախված ամեն ինչ անել, որպեսզի երկու եղբայրական հանրապետությունների ժողովուրդներն ապրեն հաշտ ու խաղաղ, ակտիվորեն աշխատեն հանուն սովետական սոցիալիստական հասարակության կյանքի բոլոր կողմերի նորացման խնդիրների իրագործման:

4. ՍՍՀՄ Գերագույն սովետը դիմում է Հայաստանի ու Ադրբեջանի աշխատավորներին, ջերմագին կոչ անելով ցուցաբերել իմաստնություն և զգաստություն, մի կողմ դնել փոխադարձ վիրավորանքները ու մեղադրանքները, վերահաստատել ձեռնարկությունների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների աշխատանքի ռիթմը, բոլոր ուժերը գործադրել, որպեսզի ցանկացած ազգության սովետական քաղաքացին երկու հանրապետությունների տարածքում իրեն զգա վերականգնման այն մեծ գործի լիիրավ և իրավահավասար մասնակիցը, որ կատարում է սովետական ժողովուրդը:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության
նախագահ՝ Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության
քարտուղար՝ Թ. ՄԵՆԹԵՇԱՇՎԻԼԻ

Մոսկվա, Կրեմլ, 1 դեկտեմբերի 1988 թ.